ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Կայծ».—Տնտեսական, քաղաքական, հասարակական օրաթերթ.— «Մեր օրգանը պէտք է լինի բերան հայ բանուորութեան, պրոլետարական համաշխարհային բանակի այդ փոքրիկ անբաժան գնդերից մէկի։ Նա պաշտպան ու արտայայտիչ պէտք է լինի բուրժուական-ազգասիրական իդէօլոգիային սպրուկ եղած և այդ սպրկութիւնից այժմ ազատուող հայ բանուորներին։—Մեր օրգանը կ'աշխատի իր կարողութեան չափ ծառայել հայ բանուորութեան և նրա բնական բարեկամ ու դաշնակից՝ հայ աղքատ գիւղացիութեան շահերին։ Վերև առաջ բերած խօսքերով է բնորոշում իր երևան գալու անհրաժեշտութիւնը փոքրիկ «Կայծը»։

Այդպիսով մենք ունենք երկու սոցիալ-դեմոկրատական թերթ. մէկը՝ «Կեանքը», որ սոցիալդեմոկրատիայի մէջ հետևում է ազգային ինքնավար սոց.-դեմ. կազմակերպութիւնների ֆեդերատիւ սկզբունքին, իսկ միւսը՝ «Կայծը» որ դէմ է այդ ձևի բաժանման պրոլետարիատի մէջ. Նա իր ուղղութեամբ, ինչպէս երևում է, պատկանում է «փոքրամասնականների» ճիւղին։ Երկուսն էլ ծառայում են այն վեհ հոսանքին, որ պէտք է մաքրէ հասարակական ներկայ մթնոլորտը և ազատէ մարդկութիւնը այն անաբարոյ կաշկներից, որոնցից բղխում են բոլոր հասարակական չարիքները։

Մեր մէջ դժբախտներին և արտաքսհանգամանքների չնորհիւ առաջ եկած ազգային յեղափոխական գործակերպութիւնները կամաց-կամաց իրացրին «նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքը և մեծ մասամբ դառան վերջ ի վերջոյ կոնսպիրատիւ, սահիկան բիւրօկրատիաներ՝ նրա բոլոր հրէշաւոր պակասութիւններով. այդ սեսակ «յեղափոխական բիւրօկրատիայի» դուլեհան մէջ շահադիտուած, կամ յաճախ մոլորուած ու միամիտ մարդիկ, չէն կարողանում տեսնել և լսել այն աղաղակող բռնութիւնների ու գործունեների մասին, որ ամեն օր կատարում են հայ ժողովրդի գլխին զանազան տգէտ պրիմիտիւներ, վայրենի և բիրտ ոյժեր և անբարոյականացնում նրան։

«Կայծը» փոքրիկ Դաւիթի խրոխտութեամբ դէմ է դուրս եկել Գողիաթի դէմ և փաստերով մերկացնում է այդ յեղափոխական բիւրօկրատիաների «յանդգնութիւնները» «Սուտ է, զրպարտութիւն է» գոռում-գոչումներով են աշխատում ծածկել ցաւալի իրողութիւնները և այդպիսով առջի ծառայութիւն են ցոյց տալիս այդ կազմակերպութիւններին...Պէտք է թողնել արդարանայդ մեթօդը, որովհետև այդ ձևի հերքումներ տպում են և թուրք և ռուս բիւրօկրատիան։ Դա համոզեցուցիչ չէ, ինչպէս և այն թէ «քննութիւն է, կատարում «ենք պատժենք»... և այլն։ Դժբախտաբար ցաւը ունի խոր պատճառներ ունի և խուսափում է արմատական բժշկութիւնից, որովհետև ռուս բիւրօկրատիայի սահեցած դժոխային պայմանները՝ սթափուելու, խաղաղ ստեղծագործական աշխատանքի նուիրուելու հնարաւորութիւն չեն տալիս մեզ...

Գալով «Կայծի» բուն նպատակներին նուիրուած յօդուածներին կը ցանկանայինք որ իլլուզիաներով տարուած նա չմոռանար մեր իրականութիւնը իր առանձնայատուկ պայմաններով, չմոռանար այն էական գծերը, որոնք տանում են դէպի վերջնական նպատակը։ Բացի այդ ունի նպատակայարմար կը լինեը հետևել Պլեխանովի տակտիկային, քան հնացած «բունտարական բակունինիզմին»... Մեր Կովկասի «ս. դ.»-ը այդ կողմից շատ են հեռանում Պլեխանովի փոքռուած, շրջահայեաց, խելացի խորհուրդներից...Կուտայ Օյամաների և Օգօնների գլխի սլիտակ մազերը ունի յարգի են քան տաք գլուխ չահիլների կրակոտ ճառերը և լոկ զգացմունքներով քեզդրած տակտիկան...

—

Խմբագիր՝ Լ. Սարգսեան
Հրատարակիչներ Վ. Գաբամեան
Լ. Սարգսեան։